ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 17.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/132

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Մասնակից՝ «ANY Security Printing Company» PLC («ANY Biztonsagi Nyomda» Nyrt)

Մասնակցությամբ՝
«ANY Security Printing Company» PLC («ANY Biztonsagi Nyomda» Nyrt)-ի ներկայացուցիչ՝ Ա. Խզմալյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ, ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների տպագրության աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 18.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7824-2021 գրությամբ «ANY Security Printing Company» PLC («ANY Biztonsagi Nyomda» Nyrt)-ին (այսուհետ նաև՝ Մասնակից)

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 11.05.2021թ. թիվ 1/18-2/28053-2021 գրության հիման վրա, 18.05.2021թ.-ին «ANY Security Printing Company» PLC («ANY Biztonsagi Nyomda» Nyrt)-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 18.05.2021թ.-ին:

18.05.2021թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2021/132 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

26.05.2021թ.-ին, 03.06.2021թ.-ին և 17.06.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 03.06.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 17.06.2021թ.-ին:

2. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 11.05.2021թ. թիվ 1/18-2/28053-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հաշվի առնելով, որ «ANY Biztonsagi Nyomda» Nyrt-ն և «ԻՄՓՈՐԹ ԷՅՋՆՍԻ» ՍՊԸ-ն մասնակցել են ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպված ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով բաց մրցույթով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար «ԾԽԱԽՈՏ»,

«ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔ» տեսակների ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների տպագրության աշխատանքների գնման գործընթացին և որի արդյունքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն խախտել են գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակիցների հետագա մասնակցության դադարեցմանը՝ կից ներկայացվում է անհրաժեշտ տեղեկատվություն՝ հիշյալ մասնակիցներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «ANY Security Printing Company» PLC («ANY Biztonsagi Nyomda» Nyrt)-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«ANY Security Printing Company» PLC («ANY Biztonsagi Nyomda» Nyrt)-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 18.05.2021թ.-ին գրությամբ դիմել է «ANY Security Printing Company» PLC («ANY Biztonsagi Nyomda» Nyrt)-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7824-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ ներկայացնելով գրավոր դիրքորոշում:

Մասնակիցը, 24.05.2021թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշում, հայտնել է հետևյալը.

«1. 25.01.2021 թվականին ՀՀ պետական եկամուտների հանձնաժողովի (այսուհետ՝ ՊԵԿ) կողմից ՀՀ ՊԵԿ կարիքների համար «ԾԽԱԽՈՏ», «ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔ» տեսակների ակցիզային դրոշմանիշների և դրոշմապիտակների տպագրության աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» բաց մրցույթը (այսուհետ՝ «Մրցույթ»), որին մասնակցության հայտ են ներկայացրել 3 ընկերություն Հայաստան, «Իմփորթ էյջնսի» ՍՊԸ-ն և «Էյ էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ-ն:

2. 25.01.2021 թվականի ՊԵԿ գլխավոր քարտուղարի թիվ 27/1-Ա հրամանով ձևավորվել է ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով բաց մրցույթով ՀՀ ՊԵԿ կարիքների համար «ԾԽԱԽՈՏ», «ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔ» տեսակների ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների տպագրության աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողով (նախագահ Ա. Մանգասարյան, անդամներ Ս. Խաչատրյան, Ն. Ներսիսյան, Վ. Գալստյան, Լ. Զաքարյան, քարտուղար Գ. Ղազարյան) (այսուհետ՝ «Գնահատող Հանձնաժողով»):

3. 05.03.2021 թվականի թիվ 652-1834 համարի ներքո «Արդշինբանկ» ՓԲԸ-ն տրամադրել բանկային երաշխիք՝ որպես Մրցույթում Հայտատուի մասնակցության հայտի ապահովում 180,316.3 եվրո գումարի չափով, մինչև 30.07.2021 թվականը վավերության ժամկետով (այսուհետ՝ «Հիմնական բանկային երաշխիք»): Հիմնական Բանկային երաշխիքը սկան տարբերակով ուղարկվել է Գնահատող Հանձնաժողովին նույն օրը, 17:04-ին, իսկ դրա բնօրինակը ուղեկցող գրությամբ մուտք է արվել ՊԵԿ քարտուղարություն 09.03.2021 թվականին (մտից համար՝ 7/4487-2021):

4. 09.03.2021 թվականի Գնահատող Հանձնաժողովի Մրցույթում ստացված հայտերի բացման նիստի թիվ 5 Արձանագրությամբ նիստը հետաձգվել է մինչև 15.03.2021 թվականը, ժամը 10:00-ն:

5. 12.03.2021 թվականին Գնահատող Հանձնաժողովի քարտուղար Գուրգեն Ղազարյանի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով (gurgen_ghazaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեից) Հայտատուին է ուղարկվել ծանուցում առ այն, որ հայտում առկա է անհամապատասխանություն և առաջարկ է արվել կապ հաստատել ընթացակարգը համակարգող Գ. Ղազարյանի հետ 060 544 70 կամ 096 44 89 19 հեռախոսահամարներով: Սույն նամակին նույն օրը Հայտատուի ներկայացուցիչը արձագանքել է (klara.major@any.hu էլեկտրոնային փոստի հասցեից) և հայտնել, որ Հայտատուն արդեն ձեռնամուխ է եղել բանկից լրացուցիչ երաշխիք ստանալու գործընթացին:

6. 15.03.2021 թվականին armeps.am համակարգի միջոցով Հայտատուին ուղարկվել է ծանուցում (այսուհետ՝ «Ծանուցում 1»), որում մասնավորապես նշվել է, որ Ծանուցում 1-ը ստանալուց հետո 1 աշխատանքային օրվա ընթացքում պետք է շտկել անհամապատասխանությունը և Ծանուցում 1-ով նշված փաստաթուղթը ուղարկել գնումների համակարգողի էլ. փոստին gurgen_ghazaryan@taxservice.am հասցեով և դրա բնօրինակը ներկայացնել Գնահատող Հանձնաժողովին: Միաժամանակ վերջինս հիշեցրել է, որ համաձայն «ՊԵԿ-ԲՄԱՇՁՐ-21/1» ծածկագրով գնման հրավերի 8.10 կետի եթե

մասնակիցը շրկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Մասնավորապես, ՀՀ դրամի ու Եվրոյի փոխարժեքի տատանողական բնույթը հաշվի առնելով Հայտատուի կողմից ներկայացված բանկային երաշխիքի գումարը, այն է 180,316.3 եվրո գումար, հավասար չէր Մրցույթին մասնակցելու հայտում ներկայացված մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին:

7. Ծանուցում 1-ով սահմանված անհամապատասխանությունը շրկելու, այն է բանկային երաշխիքի պակասող գումարը համալրելու համար սահմանված ժամկետի ավարտն էր 2021 թվականի մարտի 16-ը, ժամը 18:00-ն:

8. Ծանուցում 1-ը ստանալու պահի դրությամբ Հայտատուն արդեն իսկ ձեռնամուխ էր եղել խնդրի շրկմանը, մասնավորապես արդեն իսկ 12.03.2021թ.-ին դիմել էր Հունգարիայում իր բանկին լրացուցիչ երաշխիքի տրամադրման համար, որի մասին է վկայում Հայտատուի բանկի Ռայֆայզեն բանկի, կողմից 2021 թվականի մայիսի 14-ին IGTE061497 համարի ներքո տրամադրված բացատրական նամակը (այսուհետ «Ռայֆայզեն բանկի նամակ»):

9. Արդեն 17.03.2021 թվականին Հայտատուն իր բանկից ստացել է լրացուցիչ երաշխիքի (երաշխիքի գումարի ավելացման) մասին փաստաթղթի նախագիծ, և համաձայնեցման համար այն ուղարկել է gurgen_ghazaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին, որը հանդիսացել է Գնահատող Հանձնաժողովի հետ գրագրության պաշտոնական էլեկտրոնային հասցե (նամակն ուղարկվել է Հայտատուի nora.zambo@any.hu էլեկտրոնային փոստի հասցեից, նամակի արտատպվածքը կցվում է):

10. Որևէ արձագանք չստանալով լրացուցիչ երաշխիքի (երաշխիքի գումարի ավելացման) մասին փաստաթղթի ընդունելիության վերաբերյալ, և բազմաթիվ փորձերի արդյունքում այդպես էլ չկարողանալով հեռախոսակապի միջոցով ճշտել հանձնաժողովի կողմից նշված նամակի ստացման փաստն ու դրա վերաբերյալ դիրքորոշումը, Հայտատուն 19.03.2021 թ.-ին կրկին գրություններ է ուղարկել gurgen_ghazaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին, որին ի պատասխան առաջարկ է ստացել կապ հաստատել մեկ այլ աշխատակցի հետ (նամակներն ուղարկվել են Հայտատուի jozsef.tahoczki@any.hu էլեկտրոնային փոստի հասցեից, արտատպվածքը կցվում է):

11. Հայտատուն նաև ի սկզբանե դիմել է Հունգարիայում իր բանկին լրացուցիչ երաշխիքի (երաշխիքի գումարի ավելացման) նպատակով հայաստանյան բանկին «Արդշինբանկ» ՓԲԸ-ին, պահանջ ներկայացնելու միջնորդությամբ, որի մասին է վկայում Ռայֆայզեն բանկի նամակը: «Արդշինբանկ» ՓԲԸ-ն Ռայֆայզեն բանկի պահանջը ստացել է

19.03.2021 և համապատասխան բանկային ընթացակարգերի հիման վրա այն հաստատել է թիվ 652-2262 համարի ներքո 23.03.2021 թվականին (այսուհետ՝ «Լրացուցիչ բանկային երաշխիք»), որի արդյունքում Հիմնական բանկային երաշխիքի գումարը ավելացվել է և կազմել է 221,000 եվրո: Լրացուցիչ բանկային երաշխիքը կից գրությամբ հաջորդ օրը 24.03.2021 թվականին ներկայացրել է Գնահատող Հանձնաժողովին (մտից համար 7/5851-2021):

12. Փաստացի, Ծանուցում 1-ով սահմանված անհամապատասխանությունը շտկելու մասին պահանջը Հայտատուի կողմից կատարվել է 24.03.2021 թվականին:

13. 05.04.2021 թվականի Գնահատող Հանձնաժողովի թիվ 9 Արձանագրությամբ վերջինս որոշում է կայացրել ևս մեկ հնարավորություն տալ Հայտատուին շտկելու հայտում տեղ գտած անհամապատասխանությունը (այսուհետ «Ծանուցում 2»): Պետք է արձանագրել, որ Հայտատուի կողմից անհամապատասխանությունն արդեն վաղուց շտկված էր, այն է՝ 24.03.2021 թվականից:

14. 05.05.2021 թվականի ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանի կողմից թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/27 Որոշմամբ ըստ բողոք բերող անձ «Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊԸ-ի որոշում է կայացվել պարտավորեցնել Գնահատող Հանձնաժողովին ընդունել որոշում Հայտատուի Մրցույթում մասնակցելու հայտը մերժելու մասին (այսուհետ՝ «Բողոքարկման որոշում»):

15. 10.05.2021 թվականին Գնահատող Հանձնաժողովի կողմից, հիմք ընդունելով Բողոքարկման որոշումը, տեղի է ունեցել հերթական նիստը, որի թիվ 11 Արձանագրությամբ Հայտատուի հայտը Մրցույթում գնահատվել է անբավարար (2-րդ կետ) և այդ կապակցությամբ որոշում է կայացվել դիմել «Արդշինբանկ» ՓԲԸ-ին՝ Հիմնական բանկային երաշխիքի գումարը վճարելու պահանջով (4-րդ կետ) եզրահանգելով, որ մասնակիցը, այն է՝ Հայտատուն, խախտել է գնման գործընթացի շրջանակում սպանձնած պարտավորությունը, որը հանգեցրել գործընթացին Հայտատուի հետագա մասնակցության դադարեցմանը (այսուհետ «Արձանագրություն թիվ 11»):

Մեր դիրքորոշման էությունն է հանդիսանում այն, որ Բողոքարկման որոշումը խախտում է Մրցույթում մասնակցելու հայտ ներկայացրած տեղական և օտարերկրյա մասնակիցների միջև իրավահավասարության, մրցակցության, ոչ խտրական մոտեցման կիրառման սկզբունքները, ինչպես նաև արձանագրում ենք, որ Հայտատուն կատարել է իրենց կախված և հնարավոր բոլոր գործողությունները և ձեռնարկել է իրենից կախված բոլոր ողջամիտ և բավարար միջոցները իրեն առաջադրված անհամապատասխանությունը

շտկելու պահանջը պատշաճ կատարելու ուղղությամբ և այդ մասով սահմանված ժամկետից ուշ ներկայացված շտկումը չպետք է հանգեցնի Հայտը մերժելուն և անբավարար ճանաչելուն, իսկ եթե անգամ հայտը մերժվում է, ապա կատարված խախտումը չպետք է որակվի որպես «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետի իմաստով գնման գործընթացի շրջանակներում ստանձնած պարտավորության այնպիսի խախտում, որը հանգեցրել է գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը: Հետևապես, այն չպետք է հիմք հանդիսանա նաև հայտի ապահովման վճարման համար:

Եվ վերջապես, նաև պետք է հաշվի առնել կոնկրետ Մրցույթի շրջանակներում գնման ողջ գործընթացը և Հայտատուի գործողությունների փաստացի և իրական ազդեցությունը գնման գործընթացի վրա, այդ թվում՝ նկատի ունենալով, որ Գնահատող Հանձնաժողովի ներկայացուցիչներից ստացվող հակասական ազդակները Հայտատուի մոտ իրավական (լեգիտիմ) ակնկալիք էին ստեղծել, որ գործադրելով ողջամիտ և հնարավոր բոլոր ջանքերը շտկումը ժամանակին կազմակերպելու ուղղությամբ նա չի խախտում գնման գործընթացը (արձանագրելով նաև, որ նույն Գնահատող Հանձնաժողովը անհամապատասխանությունները շտկելուց այն է Լրացուցիչ բանկային երաշխիքը ներկայացնելուց, հետո ևս մեկ անգամ անհասկանալի հիմնավորմամբ շտկված անհամապատասխանությունները շտկելու հնարավորություն է տվել Հայտատուին դրա համար նույնիսկ հարցում անելով և պարզաբանում պահանջելով ՀՀ ֆինանսների նախարարությունից):

Ա. Հայտատուի հայտի ապահովման մասով լրացուցիչ ապահովման ներկայացումը մեկ աշխատանքային օրվա մեջ չներկայացնելը որպես Հայտատուի պարտավորությունների խախտում համարելն ու դրա առնչությամբ Հայտատուի համար բացասական հետևանքներ առաջադրելը հակասում է մրցակցության, իրավահավասարության և խտրականության արգելման սկզբունքները:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի (այսուհետ «Օրենք») համաձայն «Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում;

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:...»

Այս համատեքստում գնման գործընթացի կազմակերպման վերաբերյալ ՀՀ օրենսդրության մեջ տեղ գտած հիմնական կարգավորումները ուղղված են մասնակիցների միջև իրական մրցակցության հնարավորությունը և իրավահավասարությունը ապահովելուն: Օրինակ, «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը»-ով (ՀՀ կառավարության որոշում թիվ 526- Ն առ 4-ը մայիսի, 2017 թվական) (այսուհետ «Կարգ») 35-րդ կետում սահմանում է Գնահատող Հանձնաժողովի քարտուղարի լրացուցիչ պարտավորությունները ձեռնարկել միջոցներ ուղղված մասնակիցների միջև մրցակցության խրախուսմանը:

Միաժամանակ, պետք է արձանագրենք, որ Կարգով, Օրենքով և Գնահատող Հանձնաժողովի կողմից սահմանվող ժամկետները և կայացվող որոշումները միշտ չէ, որ ապահովում են Կողմերի միջև իրավահավասարությունը կամ խթանում մրցակցությունը, հատկապես, երբ խոսքը գնում է տեղական և օտարերկրյա ընկերություն-մասնակիցների մասին: Պետք է նկատի ունենալ, որ Կարգի 41-րդ կետը սահմանում է, որ «41. Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ .., ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:...»

Սույն գործի շրջանակներում Հայտատուին ծանուցված անհամապատասխանությունը վերաբերում էր Հիմնական բանկային երաշխիքի չափին, որը համաձայն Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի և գնման հրավերի 8.9 կետի պետք է հավասար լիներ Մրցույթին մասնակցելու հայտում ներկայացված մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին, սակայն փաստացի ավելի քիչ էր: Անճշտությունը բխում էր այդ թվում այն հանգամանքից, որ գնառաջարկը ներկայացվել էր ՀՀ դրամով, իսկ Հիմնական բանկային երաշխիքը եվրոյով, և արդյունքում ՀՀ դրամ-եվրո փոխարժեքների այդ ժամանակահատվածում տեղի ունեցող զգալի տատանումների պատճառով արձանագրվել էր անճշտություն:

Այժմ, պետք է նկատի ունենալ, որ հայտի ապահովումը, որը պահանջվում է բանկային երաշխիքի տեսքով, պատշաճ կարգով տրամադրելը կախված չէ միայն հայտատուներից, այլ նաև առնվազն ևս մեկ սուբյեկտից այն թողարկող բանկից: Իսկ

հատկապես Հայտատուի դեպքում (քանի որ նա օտարերկրյա կազմակերպություն է) գործընթացին ավելանում է ևս մեկ սուբյեկտ օտարերկրյա հայտատու կազմակերպության օտարերկրյա բանկը, ում միջոցով էլ հայտատուն սկսում է գործընթացը, որի արդյունքում օտարերկրյա բանկի հետ համագործակցելով հայաստանյան բանկը տրամադրում է երաշխիքը: Այս համատեքստում, ցանկացած ժամկետ, որը սահմանվում է հայտատուի համար և դրա հետագա պահպանումը գնահատելիս պետք է հաշվի առնել տվյալ գործընթացում «խաղացողների» քանակը, ներգրավվածության աստիճանը և հայտատուների ժամկետների վրա ազդելու հնարավորությունը:

Հետևապես, Ծանուցում 1-ով Լրացուցիչ բանկային երաշխիքը ներկայացնելու համար 1 աշխատանքային օր տրամադրելով Գնահատող Հանձնաժողովը Հայտատուին դրել է ակնհայտ անհավասար, ոչ մրցակցային և խտրական կարգավիճակում ի համեմատ հայաստանյան հայտատու – մասնակիցների: Ինչպես արձանագրված է Ռայֆայզեն բանկի նամակում Հայտատուից լրացում անելու մասին պահանջը Հայտատուի Հունգարական բանկը ստացել է դեռևս 12.05.2021 թվականին, այսինքն առնվազն 3 օր առաջ Ծանուցում 1-ից, որից հետո Հունգարական բանկը նախաձեռնել է իր բանկային ընթացակարգերին համապատասխան միջնորդությունը հայաստանյան գործընկեր բանկին «Արդշինբանկ» ՓԲԸ-ին ուղղելու գործընթացը: Ըստ ընթացակարգի հայաստանյան բանկը պետք է հաստատեր միջնորդությունը և համապատասխան նամակով ծանուցեր Հայտատուին, իսկ Լրացուցիչ բանկային երաշխիքը ուղղեր Գնահատող Հանձնաժողովին: Ինչպես փաստում է Ռայֆայզեն բանկը իր նամակում ողջ գործընթացը կազմակերպվել է բանկային ներքին ընթացակարգերով սահմանված ժամկետների պահպանմամբ և կարգով գործնականում հնարավոր ամենասեղմ ժամկետներում :

Եթե համանման իրադրությունը փորձենք պրոյեկտել հայաստանյան հայտատուի նկատմամբ, կնկատենք, որ գործնականում գուցե և հնարավոր լիներ Հայաստանում գտնվող հայտատուի համար միևնույն ժամային և աշխարհագրական գոտում գտնվող հայաստանյան բանկից ստանալ հայտի ապահովման հետ կապված անհրաժեշտ հաստատումները 1 աշխատանքային օրվա ընթացքում, թեև պնդել միանշանակ չենք կարող հաշվի առնելով ներգրավված առնվազն 1 հավելյալ «խաղացողին»:

Տվյալ պարագայում օտարերկրյա հայտատուն ակնհայտ գտնվում է առավել անբարենպաստ մրցակցային իրավիճակում, իսկ 1 օրում անհամապատասխանությունների շտկում պահանջելը դնում է օտարերկրյա հայտատուին անհնարին դրության մեջ, հետևապես Կարգի տառացի կիրառումը ուղղակիորեն խախտում է հայտատուների միջև

մրցակցության և իրավահավասարության ապահովման սկզբունքները և հանգեցնում է տեղական և օտարերկրյա հայտատուների համար փաստացի խտրական հետևանքների:

Բացի այդ, տվյալ գործով ստեղծված իրավիճակում իրավահավասարության և մրցակցության սկզբունքները խախտվում են նաև հայտի ապահովում չներկայացրած և փաստացի այն թերություններով ներկայացրած անձանց միջև: Այսպես, քանի որ անհամապատասխանությունը վերաբերում է հայտի ապահովմանը, ստեղծվում է մի իրավիճակ, երբ ոչ պատշաճ, օրինակ պակաս չափով վճարված, հայտի ապահովում տրամադրած հայտատուն, ճանաչվելով Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի իմաստով գնման գործընթացում պարտավորության խախտում թույլ տված, որը հանգեցրել է իր հետագա մասնակցության դադարեցմանը, փաստացի ավելի քիչ բարենպաստ և խտրական մոտեցման է արժանանում և փաստացի կրում է էապես ավելի ծանր հետևանքներ, քան նման ապահովում առհասարակ չներկայացրած մասնակիցները: Մասնավորապես, եթե առհասարակ հայտի ապահովում չի ներկայացվել, ապա որևէ գործիք Գնահատող Հանձնաժողովի իրավասության ներքո առկա չէ ստանալու վճարումը: Հետևապես, Հայտատուն պնդում է, որ երբ անհամապատասխանությունը վերաբերում է հայտի ապահովմանը, ապա դրա ոչ պատշաճ կատարումը չպետք է հիմք հանդիսանա Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի ուժով հայտի ապահովման վճարում պահանջելու համար, քանի որ հակառակ դեպքում հատկապես ապահովման ներկայացման հարցում թերություններով բայց ընդհանուր առմամբ բարեխիղճ գործող հայտատուն էապես ոչ բարենպաստ և փաստացի խտրական հետևանքներ է կրում ի համեմատ անբարեխղճորեն որևէ ապահովում չներկայացրած հայտատուի: Ավելին, նման մոտեցումը նաև հակասում է Օրենքով սահմանված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքին, քանի որ քաջալերում է հայտի ապահովում չներկայացնելը ի համեմատ թերի ներկայացված ապահովման թերությունների շտկման, դրանով դրդելով բարեխիղճ մասնակիցներին չշտկել թերությունները:

Ամբողջ վերոգրյալի հիման վրա գտնում ենք, որ Հայտատուի հայտի ապահովման մասով լրացուցիչ ապահովման ներկայացումը մեկ աշխատանքային օրվա մեջ չներկայացնելը որպես Հայտատուի պարտավորությունների խախտում համարելն ու դրա առնչությամբ Հայտատուի համար բացասական հետևանքներ առաջադրելը հակասում է մրցակցության, իրավահավասարության և խտրականության արգելման սկզբունքները:

Բ. Հայտատուն ձեռնարկել է իրենից կախված բոլոր ողջամիտ և բավարար միջոցները.

Ինչպես իր Բողոքարկման որոշման մեջ նշել է ՀՀ գնումների հետ կապված բողոք քննող անձը ստանձնած պարտավորությունների խախտման հիմքերը կարելի է պայմանականորեն բաժանել երկու խմբի օբյեկտիվ և սուբյեկտիվ (էջ 24, 2-րդ պարբերություն): Համանման դիրքորոշում է հայտնել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը իր «Հայբիզնեսբանկ» ՍՊԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով հայտնած 03/12/2014 թվականի որոշմամբ: Մասնավորապես, ՀՀ Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ «ժամկետը բաց թողնելու հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի օբյեկտիվ և սուբյեկտիվ», որոնցից օբյեկտիվների շարքին է դասել ֆորսմաժորային դեպքերը, որոնց նկատմամբ պարտավորություն ստանձնած անձը չունի որևէ վերահսկողություն և չէր կարող կանխատեսել դրանց վրա հասնելը, իսկ սուբյեկտիվ գործոնների մասին խոսելիս Վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ դրանք առավել անմիջականորեն կապված են անձի հետ և պայմանավորված են գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող խնդիրների լուծմամբ, առանց որի անհնարին է դառնում ստանձնած պարտավորության կատարումը:

Թեև ՀՀ գնումների հետ կապված բողոք քննող անձը իրավացիորեն իրականացրել է օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնների միջև տարբերակումը, այնուամենայնիվ, Հայտատուն գտնում է, որ դրա արդյունքում Բողոքարկման որոշման մեջ տեղ գտած եզրահանգումները չեն արտացոլում դրանց իրական կիրառումը սույն գործի շրջանակներում: Մասնավորապես, ՀՀ գնումների հետ կապված բողոք քննող անձը եզրահանգել է, որ օրենսդրի կողմից անճշտությունները շտկելու համար 1 աշխատանքային օրվա ժամկետ սահմանելը հանդիսանում է այն «օբյեկտիվ» ժամանակահատվածը, որը անհրաժեշտ է մասնակցին: Նախ, ցանկանում ենք արձանագրել, որ Հայտի ապահովման հետ կապված թերությունները 1 աշխատանքային օրում շտկելու պահանջը սահմանված է ՀՀ կառավարության կողմից հաստատված Կարգով, որն օրենսդրի հետ առհասարակ առնչություն չունի, ավելին, այն հանդիսանում է ենթաօրենսդրական ակտ, ստորադաս է Օրենքին (որն ընդունվում է օրենսդրի կողմից) ու չպետք է հակասի դրան, այն է՝ չպետք է հակասի Օրենքով ամրագրված այնպիսի սկզբունքներին, ինչպիսիք են մրցակցության և իրավահավասարության սկզբունքները: Երկրորդ, բողոքներ քննող անձը տվյալ գործի շրջանակներում հաշվի չի առել Հայտատուի նկատմամբ կիրառելի «սուբյեկտիվ» գործոնները, այն է որ օտարերկրյա հայտատուի համար անհնարին է կոորդինացնել

բանկային երաշխիքի որևէ փոփոխություն իր օտարերկրյա բանկի, հայաստանյան գործընկեր բանկի և ՀՀ պետական մարմինների միջև 1 աշխատանքային օրում, ինչպես նաև Հայտատուի ներդրած բոլոր հնարավոր ջանքերն ու միջոցները հաշվի առնելով հետևյալ գործոնները.

1. Գնահատող Հանձնաժողովը ARMEPS համակարգի միջոցով ծանուցումն ուղարկել է 15.03.2021 թվականին աշխատանքային օրվա ավարտին, այն է ժամը 16:49-ին, և արդյունքում Հայտատուի համար փաստացի 1 աշխատանքային օրվա ժամկետի փոխարեն Հայտատուն ուներ կես աշխատանքային օրվա ժամկետ:

2. Հայաստանի և Հունգարիայի միջև ժամային տարբերությունները:

3. Աշխարհագրական տարբերությունները, այն է Հայտատուի օտարեկրկյա մասնակից լինելը:

4. Հունգարական բանկի և հայաստանյան գործընկեր «Արդշինբանկ» ՓԲԸ-ի միջև համաձայնեցումներ ստանալու անհրաժեշտությունը, որը Հայտատուի իրավազորությունից և ազդեցության ոլորտից ամբողջությամբ դուրս է (տե՛ս այդ մասին Ռայֆայզեն բանկի նամակը, ինչպես նաև մեր եզրահանգումները սույն դիրքորոշման «Ա» բաժնում):

5. Հայտատուի բարեխիղճ մոտեցումը Գնահատող Հանձնաժողովից ստանալու համաձայնություն կամ կարծիք, որ անհամապատասխանությունների շտկման ընտրված եղանակը բավարարում է Գնահատող Հանձնաժողովի պահանջները (տե՛ս վերը 9-11 կետերում նկարագրված փաստերը այն մասին, որ Հայտատուն բազմիցս փորձել է կապ հաստատել Գնահատող Հանձնաժողովի հետ թե էլեկտրոնային փոստի, թե տրամադրված հեռախոսահամարների միջոցով). Մասնավորապես, այն հանգամանքը, որ Գնահատող Հանձնաժողովը մի քանի օր շարունակ չի արձագանքել Հայտատուի գրություններին, թեև հենց նույն Գնահատող Հանձնաժողովը նախքան 15.03.2021 թվականին կայացած նիստն ու դրա ժամանակ ընդունված որոշումը դեռևս 12.03.2021 թվականին էլեկտրոնային փոստի միջոցով հայտնել էր Հայտատուին անհամապատասխանության մասին, առաջարկել կապ հաստատել իր հետ և շահագրգռված լինելով վերացնել թերությունները միաժամանակ ակնհայտ ստանալով Հայտատուի համագործակցելու վերաբերյալ մտադրությունների մասին տեղեկություն (տե՛ս վերը կետ 5-ում նկարագրված փաստը).

6. Բանկերի միջև համաձայնեցումները ստանալու ժամանակահատվածում ՀՀ-ում առնվազն երկու ոչ աշխատանքային օրերի առկայությունը (մարտի 20 և 21 ոչ աշխատանքային են ՀՀ-ում):

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ Հայտատուն ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ հայտի ապահովման գումարի ավելացման և Լրացուցիչ բանկային երաշխիքի տրամադրման ուղղությամբ, իսկ 1-օրյա ժամկետում նույնը անելը փաստացի եղել է անհնարին: Մասնավորապես, Հայտատուն անգամ մինչև Գնահատող Հանձնաժողովի Կարգի 41-րդ կետի համաձայն Ծանուցում 1-ը ստանալը արդեն իսկ ձեռնարկել էր միջոցներ կապ հաստատելով իր բանկի հետ, իսկ երկու բանկերի ներքին բանկային ընթացակարգերի համաձայն Հայտատուի միջնորդության քննության նկատմամբ Հայտատուն չուներ և չէր կարող ունենալ որևէ վերահսկողություն կամ ազդեցություն: Արդյունքում, ավելացումը օբյեկտիվորեն հնարավոր է եղել ապահովել միայն 23.03.2021թ.-ին, ու ներկայացնել Գնահատող Հանձնաժողովին «Արդշինբանկի» ՓԲԸ-ի կողմից 24.03.2021 թ.-ին: Ավելի սեղմ ժամկետներում երկու երկրների բանկերի մասնակցությամբ այս գործընթացը իրականացնել հնարավոր չի եղել, հաշվի առնելով նման դեպքերում կիրառվող ընթացակարգերն ու համաձայնեցումները (այս մասին տե՛ս Ռայֆայզենբանկի նամակը).

Հաշվի առնելով Հայտատուի համար գոյություն ունեցող մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոնները, գտնում ենք, որ փաստացի անհամապատասխանության շտկումը, այն է Լրացուցիչ բանկային երաշխիքի տրամադրումը, Կարգով սահմանված 1 աշխատանքային օրում չկատարելը, այսինքն պարտավորությունը փաստացի ոչ պատշաճ կատարելը չպետք է որակվի որպես Օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ ենթակետի իմաստով այնպիսի խախտում, որը կհանգեցնի հայտի ապահովման վճարման (կամ տվյալ դեպքում բանկային երաշխիքը տրամադրած բանկին վճարելու պահանջ ներկայացնելուն):

Գտնում ենք, որ հայտատուների համար նման անբարենպաստ հետևանք կիրառելու համար անհրաժեշտ է արձանագրել ստանձնած պարտավորության խախտման մեջ հայտատուի մեղքի առկայությունը: Տվյալ գործի փաստական հանգամանքներից պարզ է դառնում, որ Հայտատուն կատարել է իրենից կախված բոլոր հնարավոր գործողությունները, ձեռնարկել է իր իրավասության շրջանակներում բոլոր հնարավոր և ողջամիտ միջոցները հնարավորինս սեղմ ժամկետներում և պատշաճ կարգով կատարելու անհամապատասխանությունը վերացնելուն ուղղված պարտավորությունը: Տվյալ պայմաններում Հայտատուի մոտ մեղքի առկայության մասին խոսել հնարավոր չէ: Հետևապես, Հայտատուի կողմից կոնկրետ հանգամանքներում և իրենից անկախ պատճառներով սահմանված ժամկետի չպահպանումը չպետք է որակվի որպես գնման գործընթացին Հայտատուի մասնակցությունը դադարեցնելու և Հայտատուի հայտը

անբավարար ճանաչելու համար բավարար հիմք: Միաժամանակ, եթե անգամ Հայտատուի հայտը որակվի անբավարար և մերժման ենթակա, այդուհանդերձ, այդպիսի ենթադրյալ խախտումը չպետք է հիմք հանդիսանա Օրենքի 32-րդ հոդվածի իմաստով Հայտի ապահովման վճարման համար:

Գ. Հայտատուն ունեցել է ողջամիտ իրավական ակնկալիքներ առ այն, որ վերջինս ունի բավարար ժամանակ շտկելու անհամապատասխանությունը.

Հայտատուն, լինելով օտարերկրյա կազմակերպություն, կարող է ունենալ որոշակի ողջամիտ ակնկալիքներ, որոնք բխում են ՀՀ իրավասու մարմինների հետ հաղորդակցությունից, ստացվող ազդակներից և նրանցից ստացված տեղեկատվության բովանդակությունից: Հատկանշական է, որ սույն գործի շրջանակներում Գնահատող Հանձնաժողովը իր 17.03.2021 թ.-ի թիվ 7 արձանագրությամբ կասեցրել է գնման գործընթացը մինչև «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի բողոքի քննության առնչությամբ (գնման գործընթացը օրենքի ուժով կասեցվում է համաձայն Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի), որը վերսկսվել է միայն Գնահատող Հանձնաժողովի 31.03.2021 թ.-ի թիվ 8 արձանագրության համաձայն: Այսինքն փաստացի ողջ կիրառելի ժամանակահատվածում գնումների գործընթացը եղել է կասեցված (ընդ որում 17.03.2021 թ.- ից Հայտատուի հետ որևէ առնչություն չունեցող պատճառներով), և այս պայմաններում ծանուցված լինելով կասեցման վերաբերյալ արձանագրություն 7-ի մասին Հայտատուն ունեցել է ողջամիտ ակնկալիք, որ գնման գործընթացի և ժամկետների կասեցված լինելու պայմաններում նա բավարար ժամկետ ունի շտկելու առկա անհամապատասխանությունը: Արդյունքում, Հայտատուի ողջամիտ ակնկալիքը եղել է այն, որ Լրացուցիչ բանկային երաշխիքի տրամադրումը 24.03.2021 թ.-ին որևէ բացասական հետևանք չի ունեցել և չէր կարող ունենալ կասեցված գնումների գործընթացի վրա:

Բացի այդ, հաշվի առնելով, որ 05.04.2021 թվականին Գնահատող Հանձնաժողովը, երկար քննարկումներից և անգամ ՀՀ ֆինանսների նախարարությունից կարծիք և պարզաբանում ստանալուց հետո, Հայտատուին է ուղարկել Ծանուցում 2-ը փաստացի տալով ևս մեկ հնարավորություն թերությունները ուղղելու մասով, Հայտատուի մոտ առաջացել է ողջամիտ ակնկալիք և վերահաստատվել նախորդ պարբերությունում նշված ակնկալիքը, որ Հայտատուն չի խախտել ժամկետները և բավարար ժամանակ է ունեցել շտկումը կատարելու համար: Հատկանշական է, որ Ծանուցում 2-ի կարիքը առհասարակ չկար, քանի որ անհամապատասխանությունը վերացվել էր դեռևս 24.03.2021 թվականին, այն է Ծանուցում 2-ից 13 օրացուցային օր առաջ: Ավելին, եթե առաջնորդվենք

Բողոքարկման որոշման մեջ բողոքը քննող անձի արտահայտված դիրքորոշմամբ, ապա Գնահատող Հանձնաժողովը դեռևս 16.03.2021 թվականին պետք է ծանուցեր Հայտատուին հայտը մերժելու և անբավարար ճանաչելու մասին, կամ առնվազն 31.03.2021 թվականի թիվ 8 արձանագրությամբ, երբ վերսկսում էր գնման գործընթացը: Փոխարենը, Հայտատուն Գնահատող Հանձնաժողովից այդ ողջ ընթացքում ստացել է ազդակներ, այդ թվում համագործակցությանն ուղղված էլեկտրոնային նամակներ (տե՛ս վերը կետ 10-ում նկարագրված փաստերը և Գնահատող Հանձնաժողովից ստացված 19.03.2021 թվականի նամակը), Ծանուցում 2-ը, այն է երկրորդ հնարավորություն շտկելու անհամապատասխանությունը, որոնք իրեն ստիպել են ենթադրել, որ նա ունի հնարավորություն շտկելու առկա թերությունը, և միայն 10.05.2021 թվականին Արձանագրություն թիվ 11-ով անդրադարձել Հայտատուի հայտը մերժելու հարցին:

15.03.2021 թվականից ընդհուպ մինչև 10.05.2021 թվականը Գնահատող Հանձնաժողովի գործողությունները, տրամադրած տեղեկատվությունը և վերջինիցս ստացվող ազդակները Հայտատուի մոտ ստեղծել և վերահաստատել իրավական ողջամիտ ակնկալիք առ այն, որ իր կողմից կատարված գործողությունները չեն հանգեցնում խախտման, իսկ եթե անգամ հանգեցնում են, ապա ոչ այնպիսի խախտմանը, որի արդյունքում կառաջանա Հայտատուի մոտ հայտի ապահովման վճարման պարտավորություն:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ 24.05.2021թ.-ին Հայտատուի անունից Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարան հայց է ներկայացվել ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լևոն Օհանյանի կողմից թիվ ԳԲՔԱ-Լ0-2021/27 Որոշումը մասնակի ուժը կորցրած ճանաչելու (Հայտատուի հայտը մերժելու մասին որոշում ընդունելուն Գնահատող Հանձնաժողովին պարտավորեցնելու մասով), Գնահատող Հանձնաժողովի 10.05.2021 թվականի Արձանագրություն թիվ 11-ը մասնակի ուժը կորցրած ճանաչելու (մասնավորապես՝ Արձանագրություն թիվ 11-ի կետ 2-ի և կետ 4-ի մասով) և ՊԵԿ-ին (այդ թվում՝ Գնահատող Հանձնաժողովի միջոցով) «Արդշինբանկ» ՓԲԸ-ին ներկայացված պահանջը (Հիմնական բանկային երաշխիքում նշված գումարը 180,316.3 եվրոն, բենեֆիցիարին վճարելու մասին) հետ վերցնելու պահանջով: Կարծում ենք, այս հանգամանքը ևս պետք է հաշվի առնվի սույն հարցի քննության շրջանակներում:»:

Վերոգրյալների հիման վրա՝ Մասնակիցը Բողոքներ քննող անձին խնդրել է «ANY Security Printing Company» PLC («ANY Biztonsagi Nyomda» Nyrt)-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում չներառել:

Մասնակիցը 02.06.2021թ.-ին ներկայացնելով դիրքորոշման լրացում, հավելել է հետևյալը.

«Ի լրումն 24.05.2021թ. ներկայացված դիրքորոշմանը սույնով հայտնում եմ հետևյալը.

ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1 ծածկագրով գնումների գործընթացի շրջանակներում "ANY Biztonsagi Nyomda" Nyrt. Ընկերությունը («Հայտատու») չի ունեցել լիազորված ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության տարածքում մինչև ս.թ. մայիսի 14-ը, երբ Հայտատուն իրավաբանական ծառայությունների մատուցման առնչությամբ ներգրավել է «ԸԴՎԱՅՋ բիզնես և իրավաբանական խորհրդատվություն» ՍՊԸ-ին և լիազորագիր է տվել նույն ընկերության աշխատակիցներ փաստաբաններ Արա Խզմալյանիս և Հայկ Մալխասյանին:

Հայտատուն մրցույթի փաստաթղթերը ներկայացրել է էլեկտրոնային եղանակով Հայտատուի տնօրենի ստորագրությամբ, www.armeps.am հարթակի միջոցով:

Բանկային երաշխիքի բնօրինակը ներկայացնելու համար Հայտատուն Վրաստանում Հունգարիայի դեսպանի աջակցությամբ կապ է հաստատել հայաստանում գործող առաքիչի հետ, որն էլ բանկային երաշխիքի բնօրինակը ստացել է բանկից և առաքել է մրցութային հանձնաժողովին: Որևէ այլ գործողություն իրականացնելու կամ Հայտատուին ներկայացնելու լիազորություն առաքիչը չի ունեցել:

Կապված հայտի ապահովման թերությունների հետ, Հայտատուն տեղեկություններ ու փաստաթղթեր ստացել է բացառապես էլեկտրոնային եղանակով: Մասնավորապես, 12.03.2021թ. Հայտատուն ստացել է էլեկտրոնային փոստի նամակ gurgen_ghazaryan@taxservice.am հասցեից (կցվում է), հայերեն լեզվով: Այնուհետ 15.03.2021թ.-ին Հայտատուն info@armeps.am հասցեից ստացել է ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1 ծածկագրով գնահատող հանձնաժողովի նամակը (կցվում է): Քանի որ 15.03.2021թ. Հունգարիայում եղել է ոչ աշխատանքային օր, Հայտատուն գրությանը ծանոթացել է հաջորդ օրը 16.03.2021թ.: Հաշվի առնելով, որ գրություններն ու կից փաստաթղթերը կազմված են եղել միայն հայերենով, Հայտատուն դրանց ծանոթանալու համար կիրառել է առցանց թարգմանության google translate գործիքը: Հայերեն լեզվից մասնագիտական թարգմանություն ստանալը Հունգարիայում մեծապես խնդրահարույց է, և այն թարգմանչական ծառայություն մատուցող կազմակերպությունները, որոնց դիմել է Հայտատուն, որպես թարգմանության իրականացման ժամկետ նշել են 1-2 շաբաթը: Այսպես, երբ հայտատուն մայիս ամսին ստացել է հանձնաժողովի թիվ 11

արձանագրությունը PDF տարբերակով (որը հնարավոր չի եղել թարգմանել առցանց գործիքների միջոցով), նա այն թարգմանության է ներկայացրել 11.05.2021թ. և թարգմանությունը ստացել է միայն 18.05.2021թ.: Հաշվի առնելով հարցի հրատապությունը, Հայտատուն ս. թ. մարտ ամսին ստացված գրությունների հետ կապված չի օգտվել նման ծառայություններից, և հիմնվել է առցանց թարգմանությունների վրա:»:

4. <u>ՍՑ-LO-2021/132 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը</u>.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների տպագրության աշխատանքների ձեռքբերման նպատակով 25.01.2021թ.-ին հայտարարվել է «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ՝ Մրցույթ), որը խմբավորված է 3 (երեք) չափաբաժիններում:

ii. Մրցույթին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Էյ Էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ն, «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ն և «ANY Security Printing Company» PLC («ANY Biztonsagi Nyomda» Nyrt)-ն:

iii. «ANY Security Printing Company» PLC («ANY Biztonsagi Nyomda» Nyrt)-ն թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ (այսուհետ նաև՝ Հայտարարություն) հայտնել է, որ ցանկություն ունի մասնակցել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների տպագրության աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 09.03.2021թ.-ի կայացրած նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշել է հայտերի ուսումնասիրության նպատակով նիստը կասեցնել և այն վերսկսել 2021 թվականի մարտի 15-ին ժամը 10:00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ. Խորենացու-3, 7 հասցեում:

v. Հանձնաժողովի 15.03.2021թ.-ի թիվ 6 արձանագրության համաձայն՝

1. «Էյ էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, որոնք կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

2. «ANY Biztonsagi Nyomda» Nyrt-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն որպես հայտի ապահովում ներկայացրած բանկային երաշխիքի գումարի չափը հավասար չէ մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին (բանկային երաշխիքում նշված է 180316.3 Եվրո, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված 1 Եվրոյի փոխարժեքը կազմել է 626,82 ՀՀ դրամ):

3. «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտում առկա են հրավերով սահմանված փաստաթղթերը՝ պիտանելիության չափորոշիչը և ֆինանսական չափորոշիչը, սակայն բացակայում է հայտի ապահովումը:

vi. Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել «ANY Biztansagi Nyomda» Nyrt-ին և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

vii. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 15.03.2021թ.-ին armeps.am համակարգի միջոցով «ANY Biztansagi Nyomda» Nyrt-ին և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում, որում մասնավորապես նշվել է, որ ծանուցումը ստանալուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում պետք է շտկել անհամապատասխանությունը և ծանուցմամբ նշված փաստաթուղթը ուղարկել գնումների համակարգողի էլ. փոստին՝ gurgen_ghazaryan@taxservice.am հասցեով և դրա բնօրինակը ներկայացնել գնահատող հանձնաժողովին: Միաժամանակ հիշեցրել է, որ համաձայն «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնման հրավերի 8.10 կետի՝ եթե մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

viii. «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի կողմից 16.03.2021թ.-ին գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացվել բողոք, որը ընդունվել է վարույթ և նույն օրը ժամը՝ 18:10-ին հրապարակվել www.gnumner.am կայքում:

ix. Հանձնաժողովի 17.03.2021թ.-ի թիվ 7 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նախագահ Ս. Մանգասարյանը տեղեկացրել է, որ «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի բողոքի ներկայացման հիման վրա ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հայտարարության և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցրել է գնման գործընթացը՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

x. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է հաջորդ նիստը հրավիրել բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման հաջորդող աշխատանքային օրը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ. Խորենացու-3, 7 հասցեում:

xi. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 26.03.2021թ.-ի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/15 ծածկագրով որոշմամբ (այսուհետ նաև՝ Որոշում) «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի կողմից 16.03.2021թ.-ին ներկայացված բողոքը մերժվել է:

xii. Որոշումը հրապարակվել է www.gnumner.am կայքում 30.03.2021թ.-ին:

xiii. Հանձնաժողովի 31.03.2021թ.-ի թիվ 8 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/15 ծածկագրով բողոքի վերաբերյալ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կայացրած որոշումը, վերսկսել է «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի հետագա ընթացքը: Գնահատող հանձնաժողովի նախագահ Ա. Մանգասարյանը հայտնել է, որ հանձնաժողովը 15.03.2021թ. թիվ 6 որոշմամբ՝ «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.9 կետի հիմքով, մեկ աշխատանքային օրով կասեցրել էր նիստը և էլեկտրոնային եղանակով տեղեկացրել «ANY Biztonsagi Nyomda» Nyrt-ին և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ին առաջարկելով՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները, սակայն «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի 16.03.2021թ.-ի բողոքի հիման վրա «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգը կասեցվել է:

xiv. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հաշվի առնելով, որ անհամապատասխանությունների շտկման փուլում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը կայացրել է որոշում գնման ընթացակարգը կասեցնելու վերաբերյալ, որը հրապարակվել է գնումների պաշտոնական տեղեկագրում 16.03.2021թ. ժամը 18:10-ին,

գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգի հետագա ընթացքի վերաբերյալ որոշել է պարզաբանման նպատակով դիմել ՀՀ ֆինանսների նախարարությանը, և խնդրել հայտնել, թե արդյոք նորից հնարավորություն պետք է տրվի «ANY Biztonsagi Nyomda» Nyrt-ին և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ին շտկելու հայտերում տեղ գտած անհամապատասխանությունները:

xv. Հանձնաժողովի 05.04.2021թ.-ի թիվ 9 արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովի նախագահ Ա. Մանգասարյանը տեղեկացրել է, որ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգի հետագա ընթացքի վերաբերյալ պարզաբանման նպատակով դիմել էր ՀՀ ֆինանսների նախարարությանը, պարզելու համար, թե արդյոք նորից հնարավորություն պետք է տրվի «ANY Biztonsagi Nyomda» Nyrt-ին և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ին՝ շտկելու հայտերում տեղ գտած անհամապատասխանությունները: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.04.2021թ.-ին ստացվել է պատասխան թիվ-01.1/26-1/4879-2021 գրությունը, որով ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրության համաձայն հայտերի գանահատման լիազորությունը վերապահված է գնահատող հանձնաժողովին:

xvi. Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը քննարկման արդյունքում որոշել է հնարավորություն տալ «ANY Biztonsagi Nyomda» Nyrt-ին և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ին՝ շտկելու հայտերում տեղ գտած անհամապատասխանությունները:

xvii. «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշել է նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել «ANY Biztonsagi Nyomda» Nyrt-ին և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

xviii. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 05.04.2021թ.-ին armeps.am համակարգի միջոցով «ANY Biztansagi Nyomda» Nyrt-ին և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում, որում մասնավորապես նշվել է, որ ծանուցումը ստանալուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում պետք է շտկել անհամապատասխանությունը և ծանուցմամբ նշված փաստաթուղթը ուղարկել գնումների համակարգողի էլ. փոստին՝ gurgen_ghazaryan@taxservice.am հասցեով և դրա բնօրինակը ներկայացնել գնահատող հանձնաժողովին: Միաժամանակ հիշեցրել է, որ համաձայն «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնման հրավերի 8.10 կետի՝ եթե մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

xix. «ANY Security Printing Company» PLC («ANY Biztonsagi Nyomda» Nyrt)-ն «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում հայտի ապահովման «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից 23.03.2021թ.-ին տրված թիվ 652-2262 շտկված տարբերակը ուղեկցական գրությամբ Հանձնաժողովին է ներկայացրել 24.03.2021թ.-ին:

xx. «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովում Հանձնաժողովին ընդհանրապես չի ներկայացվել:

xxi. «Էյ էմ Փի Ջի գրուպ» ՍՊԸ-ի կողմից 05.04.2021թ.-ին գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/27 ծածկագրով բողոքը 05.05.2021թ.-ին կայացված որոշմամբ բավարարվել է և Հանձնաժողովին պարտավորեցվել է ընդունել «ANY Security Printing Company» PLC («ANY Biztonsagi Nyomda» Nyrt)-ի և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշում:

xxii. Հանձնաժողովի 10.05.2021թ.-ի նիստի թիվ 11 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/27 ծածկագրով որոշումը, որոշել է «ANY Security Printing Company» PLC («ANY Biztonsagi Nyomda» Nyrt)-ի և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի հայտերը գնահատել անբավարար և մերժել, քանի որ վերջիններս սահմանված ժամկետում չեն շտկել հայտերում արձանագրված անհամապատասխանությունները:

xxiii. Ռայֆֆայզեն բանկի կողմից 14.05.2021թ.-ին տրված թիվ IGTE061497 գրության համաձայն՝ Մասնակիցը 12.03.2021թ.-ին դիմել է բանկին՝ բանկային երաշխիքի չափի փոփոխման համար:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.05.2021 թ.-ի թիվ 26/26-1/7824-2021 գրությամբ «ANY Security Printing Company» PLC («ANY Biztonsagi Nyomda» Nyrt)-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (30.07.2020թ.-ի թիվ 1275-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը

կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու

անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ գործադիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ակցիզային դրոշմանիշերի և դրոշմապիտակների տպագրության աշխատանքների ձեռքբերման նպատակով 25.01.2021թ.-ին հայտարարված «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «ANY Security Printing Company» PLC («ANY Biztonsagi Nyomda» Nyrt)-ի կողմից որպես հայտի ապահովում ներկայացրած բանկային երաշխիքի գումարի չափը հավասար չէ մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին (բանկային երաշխիքում նշված է 180316.3 Եվրո, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված 1 Եվրոյի փոխարժեքը կազմել է 626,82 ՀՀ դրամ): Նշվածով պայմանավորված՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 41-րդ կետը, որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և էլեկտրոնային եղանակով տեղեկացնել «ANY Biztansagi Nyomda» Nyrt-ին և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ին առաջարկելով

մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները: Հանձնաժողովի քարտուղարի կողմից 15.03.2021թ.-ին armeps.am համակարգի միջոցով «ANY Biztansagi Nyomda» Nyrt-ին և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում, որում մասնավորապես նշվել է, որ ծանուցումը ստանալուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում պետք է շտկել անհամապատասխանությունը և ծանուցմամբ նշված փաստաթուղթը ուղարկել գնումների համակարգողի էլ. փոստին՝ gurgen_ghazaryan@taxservice.am հասցեով և դրա բնօրինակը ներկայացնել գնահատող հանձնաժողովին: Միաժամանակ հիշեցրել է, որ համաձայն «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնման հրավերի 8.10 կետի՝ եթե մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:

«ANY Security Printing Company» PLC («ANY Biztonsagi Nyomda» Nyrt)-ն «ՊԵԿ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից 23.03.2021թ.-ին տրված թիվ 652-2262 հայտի ապահովման շտկված տարբերակն ուղեկցական գրությամբ Հանձնաժողովին է ներկայացրել 24.03.2021թ.-ին:

Հանձնաժողովի 10.05.2021թ.-ի նիստի թիվ 11 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/27 ծածկագրով որոշումը, որոշել է «ANY Security Printing Company» PLC («ANY Biztonsagi Nyomda» Nyrt)-ի և «Իմփորթ Էյջնսի» ՍՊԸ-ի հայտերը գնահատել անբավարար և մերժել, քանի որ վերջիններս սահմանված ժամկետում չեն շտկել հայտերում արձանագրված անհամապատասխանությունները:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին, ուսումնասիրելով Ռայֆֆայզեն բանկի կողմից 14.05.2021թ.-ին տրված թիվ IGTE061497 գրությունը՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ սույն դեպքում, Մասնակիցը թեև խախտել է գնման գործընթացում ստանձնած պարտավորությունները, այն է՝ սահմանված ժամկետում չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթուղթը՝ բանկային երաշխիքի շտկված տարբերակը, սակայն ձեռնարկել է իրենից կախված գործողությունները՝ ուղղված փաստաթղթի ժամկետում ներկայացնելուն, բայց իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, չի կարողացել բանկային երաշխիքի շտկված տարբերակը ժամանակին ներկայացնել հանձնաժողովին:

Մասնավորապես՝ հարկ է նկատել, որ 12.03.2021թ.-ին Հանձնաժողովի քարտուղար Գուրգեն Ղազարյանի կողմից էլեկտրոնային փոստի միջոցով ստանալով գրություն, Մասնակիցը, նույն օրը, հանձն է առել բանկից լրացուցիչ երաշխիք ստանալու գործընթացին՝ դիմելով բանկին, որի մասին վկայում է Ռայֆֆայզեն բանկի կողմից 14.05.2021թ.-ին տրված թիվ IGTE061497 գրությունը:

Անդրադառնալով Մասնակցի կողմից ներկայացված դիրքորոշման իրավական ու փաստական հանգամանքներին՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ դրանք անհիմն են, հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: … :

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկինում կայացրած որոշմամբ անդրադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածին, արձանագրել է, որ օրենսդիրը, նպատակ ունենալով ապահովելու քաղաքացիական օրենսդրության վերը նշված սկզբունքներից կամքի ինքնավարության, պայմանագրի ազատության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության, քաղաքացիական իրավունքներն իրենց կամքով և ի շահ իրենց ձեռք բերելու ու իրականացնելու, պայմանագրի հիման վրա իրենց իրավունքները և պարտականություններն ազատ սահմանելու, պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման որոշելու իրականացումը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կարգավորվող հարաբերությունների

մասնակիցների՝ կողմերի համար նախատեսել է հնարավորություն՝ կնքելու ինչպես օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված, այնպես էլ չնախատեսված պայմանագիր և սահմանելու պայմանագրի պայմանները *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն ընդդեմ «ԼԵՎ ԳՐՈՒՊ ԻՐԱՎԱ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՓԲԸ-ի թիվ ԵԿԴ/1489/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշումը):*

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է վկայակոչված հոդվածի մեկնաբանությանը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը *(տե՛ս, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ*

«Լանդրաս» ՍՊԸ-ի թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):

Վերահաստատելով վերոնշյալ իրավական դիրքորոշումը՝ Վճռաբեկ դատարանը միևնույն ժամանակ հավելել է, որ մեղքի՝ որպես պատասխանատվության պարտադիր պայմանի առկայության մասին կանոնը կրում է դիսպոզիտիվ բնույթ, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածում օրենսդիրը բացառություն է նախատեսել այն դեպքերի համար, երբ քաղաքացիաիրավական պատասխանատվությունը կարող է վրա հասնել անկախ մեղքի առկայությունից, դրանք են՝ օրենքով կամ կողմերի համաձայնությամբ նախատեսված դեպքերը: Օրենքով նախատեսված դեպք է, օրինակ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի իրավակարգավորումը, որի մեկնաբանությունից բխում է, որ եթե անձը պարտավորությունը չի կատարել կամ անպատշաճ է կատարել ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս, ապա պատասխանատվությունը վրա է հասնում անկախ նրա մեղքի առկայությունից: Ընդ որում, օրենսդրի կողմից նման տարբերակված մոտեցում դրսևորելը արդարացված է, քանի որ ձեռնարկատիրական գործունեությունն իրականացվում է շահույթ (եկամուտ) ստանալու նպատակով և հետևաբար ենթադրվում է, որ նման դեպքերում բացասական հետևանքների համար պատասխանատվությունը պետք է իր վրա վերցնի հենց ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձը: Այսինքն՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձինք՝ որպես գույքային հարաբերություններում սեփական ռիսկով գործող, գործարարության համապատասխան ոլորտում մասնագիտացված սուբյեկտներ, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում անկախ մեղքի առկայությունից: Դրա հետ մեկտեղ օրենսդիրն ընդհանուր կանոնից նախատեսել է որոշակի բացառություն, որի դեպքում պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով: Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը

յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ն ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Սույն գործի փաստերի համաձայն՝ «ANY Security Printing Company» PLC («ANY Biztonsagi Nyomda» Nyrt)-ն թիվ 1 հավելվածով՝ բաց մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ հայտնելով, որ հայտը ներկայացնում է Մրցույթի հրավերի պահանջներին համապատասխան, որպես հայտի ապահովում վերջինիս կցել է բանկային երաշխիք, որի գումարի չափը հավասար չէ Մասնակցի գնային առաջարկի հինգ տոկոսին (բանկային երաշխիքում նշված է 180316.3 Եվրո, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված 1 Եվրոյի փոխարժեքը կազմել է 626,82 ՀՀ դրամ): Հանձնաժողովի քարտուղարի կողմից 15.03.2021թ.-ին armeps.am համակարգի միջոցով ստանալով շտկման մասին ծանուցումը՝ այն ստանալուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում անհամապատասխանությունը շտկելու և Հանձնաժողովին ներկայացնելու վերաբերյալ, Մասնակիցը «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից 23.03.2021թ.-ին տրված բանկային երաշխիքի թիվ 652-2262 շտկված տարբերակն ուղեկցական գրությամբ Հանձնաժողովին է ներկայացրել 24.03.2021թ.-ին:

Ամբողջ վերոգրյալ իրավական նորմերի ու դրանց մեկնաբանությունների, փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ սույն դեպքում, անհաղթահարելի ուժի իրավիճակ, որն անմիջական ազդեցություն է ունեցել գնման գործընթացով Մասնակցի կողմից ստանձնած պարտավորությունների չկարման կամ ոչ պատշաճ կատարման վրա, առկա չէ:

Հիմք ընդունելով սույն գործի փաստերը՝ Մասնակից ընկերության օտարերկրա կազմակերպություն հանդիսանալը, հայերեն լեզվին չտիրապետելու հանգամանքն ու այդ երկրում հայերեն լեզվի թարգմանչական ծառայությունների առկայության սակավությունը, ինչպես նաև բանկերի հեռահաղորդակցության և 15.03.2021թ.-ը Հունգարիայում որպես ոչ աշխատանքային օր լինելու հանգամանքները, Բողոքներ քննող անձը փաստում է, որ այդ հանգամանքները թեև անմիջականորեն ազդեցություն կարող էին ունենալ Մասնակցի կողմից գնման գործնթացի շրջանակներում ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարման համար և ըստ այդմ՝ Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերով նախատեսված ժամկետում պարտավորությունը կատարելու վրա, սակայն դրանք իրենց

ամբողջության մեջ վերցրած, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասով և ՀՀ վճռաբեկ դատարանի վերը նշված մեկնաբանությունների համատեքստում, չեն հանդիսանում ֆորս-մաժորային իրավիճակներ:

Վերոգրյալների համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ նման պայմաններում Հանձնաժողովի կողմից Մասնակցի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին կայացված որոշումն իրավաչափ է և ելնում է Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթներից: Սակայն, ինչ վերաբերում է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի կիրառման հարցին, ապա Բողոքներ քննող անձը գտնում է, որ այդ դրույթում առկա պատասխանատվության միջոցները չեն կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն, քանի որ, ինչպես վերը նշվեց, Մասնակցի կողմից ձեռնարկվել են համապատասխան միջոցներ, հայտում առկա անհամապատասխանությունները շտկելու ուղղությամբ, ինչը, սակայն, իր կամքից անկախ հանգամանքներով պայմանավորված, հնարավոր չի եղել կատարել ժամանակին:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով

նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված պահանջներին համապատասխանող փաստաթղթեր (այսուհետ՝ Փաստաթղթեր): Եվ եթե Փաստաթղթերում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, իսկ մասնակիցը սահմանված ժամկետում չի շտկում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության

խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել «ANY Security Printing Company» PLC («ANY Biztonsagi Nyomda» Nyrt)-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 18.05.2021 թ.-ի թիվ 26/26-1/7824-2021 գրությամբ «ANY Security Printing Company» PLC («ANY Biztonsagi Nyomda» Nyrt)-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ԼՕ-2021/132 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**